ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՏԱԼԻՍ ՇՐՋԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

ԾՂԹԱՆ ԱՄՈՒՐ Է, ԵԹԵ ԱՄՈՒՐ ԵՆ ԲՈԼՈՐ ՕՂԱԿՆԵՐԸ

...Այնքան ձանձրալի են եղել մեր երկրի առհասարակ բոլոր օղակներում տեղի ունեցած բոլոր կարգի ժողովները, որ հիմա պարզապես զարմանում ես, երբ որևէ խորհրդակցությունում տեսնում ես իրար հետ աշխույժ զրուցող մարդկանց: Հենց այդպիսին էր Երևանի Սպանդարյանի շրջանային խորհրդի նստաշրջանը, որտեղ դեպուտատները, հրապարակայնության ընձեռած լայն հնարավորություններից օգտվելով, ծավալեցին սուր քննադատություն՝ անկաշկանդ, բարեկամաբար, իրոք, սրտացավությամբ: Ահա դեպուտատների ելույթներից մի երկու պատառիկ.

— Երևան քաղաքում կան ոչ թե նվազ քանակի, այլ բազմաթիվ այնպիսի բնակարաններ, որոնք շատ չքնաղորեն նորոգված են ու ամեն ձմեռ սենյակներում նորմալ գործում են ջեռուցման համակարգերը, թեև նրանցում, փաստորեն, ոչ ոք չի ապրում, այն էլ տարիներ շարունակ: Դրանց, այսպես ասած, փաստաթղթային տնատերերից յուրաքանչյուրը, առանց բացառության, ունի երկու բնակարան, որոնցից մեկը պահում է, օրինակ, դեռ չծնված իր թոռան համար: Առաջարկում եմ տարիներով չբնակեցվող այս բազմաքանակ բնակարանները կեղծ տնատերերից ուղղակի խլելու, պետականացնելու նպատակով արագորեն անցկացնել գույքագրում: Այդ ճանապարհով մենք ստույգ կիմանանք բազմաթիվ ազատ բնակարանների հասցեներ. «հայտնաբերվող» տները հարկավոր է շտապ հատկացնել անցյալ տարվա դեկտեմբերյան զարհուրելի աղետի հետևանքով անօթևան մնացածների գոնե մի մասին, վշտահար այն մարդկանց, ովքեր այսօր անգամ չգիտեն, թե մոտալուտ ձմռանը որտեղ են ապրելու...

— Ինչպես ամբողջ մայրաքաղաքում, այնպես էլ մեր՝ Սպանդարյանի շրջանում երբեմն հուժկու թափով տեղի են ունենում փլուզվող բնակելի շենքերի կառուցողական-վերաշինման նպատակ հետապնդող քանդման աշխատանքներ, որոնք բոլոր դեպքերում չէ, որ կարելի է խրախուսել: Շատ երևանցիներ, որքան էլ տարօրինակ թվա, այսօր կարգին տուն չունեն ապրելու և, երբ նրանց խարխուլ օթևանները քանդում ենք՝ իհարկե, ճիշտ ենք անում: Բայց այստեղ ուրիշ ճշմարտություն էլ կա. փլվող շենքերը հաճախ քանդելով՝ ձևացնում ենք, թե վերակառուցում ենք, մինչդեռ բազալտով միայն երեսպատում ենք: Սա ոչ միայն աչքակապության նման մի բան է, այլ նույնիսկ՝ հանցագործություն. չէ՞ որ խարխուլ պատը որքան էլ արտաքուստ վերազարդարենք, միշտ ենթակա է փլվելու: Առաջարկում եմ մշակել քանդման ենթակա բոլոր շենքերը վերակառուցելու ծրագրեր և մեկընդմիշտ հրաժարվել անիմաստ երեսպատումներից, այսուհետև առաջնորդվել միայն լավ ծանրութեթև արված այդօրինակ պաշտոնական փաստաթղթերով:

— Ովքե՞ր են Երևանում բնակելի շենքերի նկուղները ու կիսանկուղները կոոպերատիվներ դարձնելու նպատակով թույլտվություն տալիս: Թույլտվություն տվողները, ախր, պարտավոր են մտածել և գուցե նաև հետևել, թե ինչպես է ազատված նկուղի նորընծա տերը վերաշինում այն. տվյալ շենքի հիմքերը շատ դեպքերում ուղղակի խարխլում, ավերում է, նույնիսկ մի գիշերվա ընթացքում ամեն ինչ ափալ-թափալ սրբելով-սվաղելով-քողարկելով, ավերվածը դրսից նայողի աչքից մեկընդմիշտ հիանալի թաքցնելով... Այդօրինակ թույլտվությունների բարձրաստիճան հեղինակները, արդյոք, մտածո՞ւմ են, որ իրենց տվյալ գործունեությամբ քաղաքի շատ շենքեր, ըստ էության, որակազրկվել են: Նկուղների նորահայտ տերերը, հապշտապ ձեռնարկելով «վերաշինման» աշխատանքները, մեծամասամբ խարխլում են տվյալ շենքի հիմքերը՝ այդ բնակարաններում քաղաքացիների ապրելը դարձնելով վտանգավոր: Այո՛, խարխուլ, հին շենքը (իսկ որոշ դեպքերում նաև նոր շենքը) «կոոպերատիվով գեղեցկացնելու» հետևանքով Երևանի մի շարք տներ կարող են ամբողջովին տակնուվրա լինել անգամ աննշան երկրաշարժից... Մեր շրջանի ճարտարապետը թող գործկոմի այս նստաշրջանին այդ մասին հանգամանալի տեղեկություններ հաղորդի:

— Արցախի պրոբլեմը հուզում է բոլորիս, բայց բոլորս չէ, որ դրա լուծման գործում ավանդ ենք ներդնում: Յուրաքանչյուրս պարտավոր է ավելի շատ գործ անել: Հանրապետության մամուլում գրեթե ամեն օր երևում են ազգամիջյան «խուլերի» վրա լույս սփռող հոդվածներ: Իսկ որևէ երևանցի, արդյոք, մտածե՞լ է դրանք թարգմանել ԽՍՀՄ ժողովուրդների լեզուներով, որպեսզի հնարավորություն ունենանք երկրով մեկ տարածելու մեր հանրապետության հայտնի լրագրերի հրապարակած կարևորագույն լուրը, եզրահանգումը, վերլուծությունը, մեզ համար կենսականորեն անհրաժեշտ այն բազում ճշմարտությունները, որոնք ադրբեջանական ազգայնամոլ մտավորականների կողմից շարունակ խեղաթյուրվել են և այսօր էլ նույն եռանդով կեղծվում են...

— Մինչև ե՞րբ պետք է ըստ էության չտեսնելու տալ Լեռնային Ղարաբաղի և Խորհրդային Հայաստանի նկատմամբ հարևան հանրապետության կողմից ձեռնարկված զարհուրելի շրջափակման պատճառած անուղղելի վնասների մասշտաբները. շրջափակում, որի բարոյականությունը, ի դեպ, անհասկանալի է աշխարհի նույնիսկ ամենախուլ անկյունում ապրող յուրաքանչյուր բանական էակի համար: Մի՞թե գերհզոր ԽՍՀՄ-ը չի կարողանում սաստել սանձարձակներին:

Ահա այսպիսի կոնկրետ, օգտակար առաջարկներ էին անում ելույթ ունեցող դեպուտատները: Իսկ մինչ այդ նստաշրջանը լսեց շրջանային խորհրդի գործկոմի հաշվետվությունը 1988—1989 թվականների իր գործունեության մասին: Գործկոմի նախագահ Լ. Գևորգյանը հենց սկզբից ասաց՝ մենք պետք է առանձնակի ուշադրություն դարձնենք նախատեսված սոցիալ-տնտեսական ծրագրերի կատարմանը, երկրաշարժի հետևանքների վերացման ընթացքին, համապատասխան խորհուրդներին ենթակա կազմակերպությունների ու ծառայությունների կառուցվածքի և գործունեության վերակառուցմանը: Ճիշտ է, Սպանդարյանի շրջանում էլ որոշակի լավ քայլեր արվել են սոցիալ-տնտեսական զարգացման տեմպերն արագացնելու, բնակչության կենսամակարդակի կայունացման և առհասարակ բոլոր բնագավառների գործերը կանոնավորելու, դրանք ավելի արդյունավետ դարձնելու ուղղությամբ, բայց մեր շրջանում էլ վերակառուցումը, այնուամենայնիվ, շատ դանդաղ է ընթանում:

Նստաշրջանն իրավացիորեն ընդգծեց, որ սպանդարյանցիների համար ամենակարևոր և ամենացավոտ սոցիալական նշանակության հարցը եղել և մնում է բնակարանային պրոբլեմը: Շրջգործկոմում բնակարանային հաշվառման է կանգնած 299 ընտանիք, ըստ աշխատավայրի՝ 4290 ընտանիք: Խիստ կարիքավոր է շուրջ 18000 մարդ, որոնցից շատերը հերթի մեջ համբերատարությամբ սպասում են ավելի քան 15 տարի: Իսկ ահա 1988 թվականին շրջանն ստացել է միայն 450 բնակարան՝ ծրագրով նախատեսված 600-ի փոխարեն: Ուրիշ կերպ լինել չէր էլ կարող, որովհետև տարերային աղետի պատճառով Երևանում էլ վթարային շենքերի թիվն ավելացել է: Շրջանի 231 շենք կառուցվել է մինչև Հայրենական պատերազմը, իսկ 228-ը՝ 1950 թվականին և ավելի ուշ: Դժվար չէ հասկանալ, որ մենք պետք է յուրաքանչյուր տասը տարին մեկ փոխենք շենքերի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ցանցերը, մինչդեռ ունեցած հնարավորություններով դա իրականացնել չենք կարող: Մի կողմից այդ պատճառով և մյուս կողմից էլ շրջխորհրդի համապատասխան ծառայությունների անբավարար աշխատանքի հետևանքով շրջանում կատարվում են բազմաթիվ վթարներ, տեղիք տալով բնակչության արդարացի դժգոհությունների: Շրջանում այսօր իրացման ենթակա են 2600 տներ, որտեղ բնակվում են ավելի քան 12 հազար քաղաքացիներ՝ իրենց օթևաններում չունենալով անգամ նվազագույն կոմունալ-կենցաղային պայմաններ:

Նստաշրջանում հատուկ տեղ տրվեց Կոնդ թաղամասի վերաշինման պրոբլեմին: Քննադատվեց շրջխորհրդի գործկոմը մանավանդ այն պատճառով, որ Կոնդում ապրող բազմաթիվ ընտանիքների հետ կնքվող պայմանագրերը ծնվում են շատ դանդաղ: Դանդաղ են ընթանում Կոնդի բնակիչների պահանջների հետ առնչվող դատարանային գործերը ևս: Այս ամենով հանդերձ, կոնդեցիներին օգնելու նպատակ հետապնդող որոշ լավ քայլեր ձեռնարկվել են. արդեն իրացվել են հարյուրավոր ընտանիքների բնակարաններ. 119 ընտանիք հենց վերջերս ստացավ պատրաստի բնակարաններ, իսկ 208-ի հետ կնքվեցին պայմանագրեր՝ տեղում ապահովելու համար: Սակայն, ինչպես ընդգծեց նստաշրջանը, իրավիճակն անհանդուրժելի է: Բնակշինարարության պլանները տարեցտարի թերակատարվում են, և պատահական չէ, որ քաղաքացիների գանգատները չեն նվազում: Սպանդարյանցիներն ինչպե՞ս կարող են չտրտնջալ, երբ 1987—88 թթ. պլանների թերակատարման պատճառով քաղաքում չի գործարկվել 2215 բնակարան: Դեպուտատները պահանջեցին մեղավորներին խիստ պատժի ենթարկել: Նրանք նշեցին ծանր վիճակից դուրս գալու ելքը՝ կոոպերատիվ և տնտեսական միջոցներով բնակարանների կառուցման թափն արագացնել: Միաժամանակ արդարացի քննադատության ենթարկվեցին մի շարք ձեռնարկությունների և հիմնարկների ղեկավարներ («Հայավիահամալիր», «Հայձուկ» արտադրական միավորումներ, «Հայհիդրոէներգաշին», «Հայջրշին» վարչություններ, թեթև արդյունաբերության, առևտրի, ժողկրթության, կապի մինիստրություններ և պետագրոարդ): Նրանք բնակշինարարության ուղղությամբ անբավարար աշխատանք են կատարում: Այդ կարևոր գործում, փաստորեն, հանդես չեն բերում լուրջ շահագրգռվածություն, իսկ շրջխորհրդի գործկոմն էլ այս կազմակերպությունների ղեկավարների հանդեպ չի օգտագործում իր ողջ իշխանությունը:

Դեպուտատներն անդրադարձան շրջանի դպրոցական գործերի վիճակի բարելավմանը: Դեռևս կան վթարային վիճակում գտնվող մանկապարտեզներ, շրջանի 18 հանրակրթական դպրոցներից 8-ը ներկայումս երկհերթ են աշխատում, իսկ 4-ը՝ եռահերթ: Ավելին. երկու տարի առաջ Թելմանի անվան դպրոցը վերակառուցման պայմանով հիմնովին քանդվեց, բայց շատ դանդաղ են ընթանում շինարարական աշխատանքները: Եվ բնավ զարմանալի չէ, որ նստաշրջանը քննադատության կրակի տակ առավ շրջգործկոմին՝ թույլ հսկողության համար, ինչպես նաև պատվիրատուին ու գլխավոր կապալառուին՝ Երքաղխորհրդի կապիտալ շինարարության գլխավոր վարչությանն ու «Երևանշին» արտադրական-շինմոնտաժային վարչությանը, որոնց ղեկավարները դպրոցաշինությանը վերաբերվում են իմիջիայլոց:

Նստաշրջանը վերլուծեց նաև արդյունաբերության, շինարարության և մյուս ճյուղերի ձեռնարկությունների գործունեության արդյունքները: Արդյունաբերական ձեռնարկությունների կողմից առաջին կիսամյակում ստացվել է շուրջ 20417 ռուբլու օգուտ: Գերակատարվել է շահույթի պլանը: Սակայն, ինչպես ընդգծվեցին ելույթներում, շահույթով աշխատել են միայն տպարանները, որոնք գործում են ապրանքային արտադրանքի իրացումից ստացված գումարի բաշխման, այսպես ասած, երկրորդ մոդելով: Նստաշրջանը նշեց, որ այս փաստից պետք է լուրջ եզրակացություններ անեն շրջանի մյուս ձեռնարկությունների ղեկավարները: Նրանք պետք է մեծ ուշադրություն դարձնեն, առաջին հերթին, պայմանագրային պարտավորությունների կատարմանը: Դիցուք՝ ոսկերչական գործարանը (դիրեկտոր՝ Է. Գրիգորյան) և Երքաղէլեկտրատրանսպորտի վարչության մեխվերանորոգման գործարանը (դիրեկտոր՝ Հ. Կարապետյան), որոնք հանգիստ շարունակում են իրենց անպատասխանատվությունը:

Դեպուտատները լայն տեղ տըվեցին տրանսպորտային կազմակերպությունների գործունեությունը բարելավելուն: Առավել սուր քննադատվեց էլեկտրատրանսպորտի ցանցը, որը, թեև հասկանալի պատճառով չի կանգնել Ադրբեջանի ազգայնամոլների կողմից իրականացվող սոսկ շրջափակման ծանր հետևանքների առաջ, բայց այդ կոլեկտիվների շատ անդամներ այս դժվարին օրերին էլ աշխատանքի են դուրս գալիս մեծ ուշացումներով, գործը երբեմն պարզապես լքում են ժամանակից շատ շուտ՝ քաղաքի աշխատավորությանը գրեթե ամեն օր արհեստականորեն մղելով դեպի «ճանապարհային» անվերջ տրտունջների և տեղին գանգատների «ոլորտը»: Քաղաքային էլեկտրատրանսպորտի վարչության ղեկավարներն ու կոլեկտիվները նման վերաբերմունքով ամեն օր նյարդայնացնում են հազարավոր մարդկանց:

Սպանդարյանի շրջանի, որն ընդգրկում է քաղաքի կենտրոնը, բարեկարգման, կանաչապատման և սանիտարական վիճակն այսօր իհարկե չի կարելի գոհացուցիչ համարել: Նստաշրջանում սրությամբ ասվեց, որ բոլորովին ներելի չէ շրջանի կանաչի շինտեղամասի նոր պետ Ս. Ծովյանի զարմանալի հանգստությունը:

Ինչպես զեկուցողը, այնպես էլ ելույթ ունեցող դեպուտատներն առաջնահերթ հարց համարեցին հանրապետության աղետի գոտում իրականացվող աշխատանքներին օգնելը: Նրանք պատմեցին այդ ուղղությամբ սպանդարյանցիների կատարած մի շարք լավ գործերի մասին և միաժամանակ արդարացիորեն քննադատեցին ՀԽՍՀ պետմատին, որը Սպանդարյանի շրջանի կազմակերպություններին համապատասխան շինանյութերով չի ապահովում: Ընդգծվեց հատկապես այն, որ վատ են առաքվում ժամանակավոր տնակների պատրաստման համար անհրաժեշտ շինանյութերը:

Շրջխորհրդի նստաշրջանում ծրագրվեց ավելի հոգատար վերաբերմունք ցուցաբերել երկրաշարժից տուժածների հանդեպ: Գործկոմը, օրինակ, լրացուցիչ պարտավորություն վերցրեց՝ սեփական միջոցներով վերականգնել Լենինականի Ավ. Իսահակյանի անվան փողոց-զբոսայգին: Նստաշրջանի կայացրած որոշումների մեջ հատուկ տեղ տրվեց հայոց լեզվի գործածության բարելավման ուղղությամբ Սպանդարյանի շրջանում նախատեսված միջոցառումները նշված ժամկետում կատարելուն (դրանք վերաբերում են ներհիմնարկային և ներհանրապետական ամբողջ գրագրությունը հայերեն կատարելուն, հայկական դպրոցներում մայրենի լեզվի ժամաքանակն ավելացնելուն, ազգային դպրոցներում գրաբարի, միջին հայերենի և արևմտահայերենի ուսուցումը գործնականորեն կազմակերպելուն և այլն): Որոշման մեջ հատուկ կետ ընդունվեց այն մասին, որ ՀԽՍՀ-ից ընտրված միութենական ժողովրդական դեպուտատները պետք է իրենց առաջնահերթ խնդիրներից համարեն հայ ժողովրդի շահերը ոտնահարող՝ 20-ական թվականներին կնքված պայմանագրերն ու որոշումներն անհապաղ վերանայելու հարց առաջ քաշելը համապատասխան վերադաս ատյաններում:

Ռաֆիկ ԳՐԻԳՈՐՅԱՆ